ԸՆԿԵՐԻՆ

Ահա՛, առաջիդ հարթ ու լայն ուղի
Դա երջանկութեան որրանն է տանում.
Գընա՛ դորանով առանց երկիւղի,
Դու կը վայելես հրճուանք ու խնդում։

Եւ քո կեանքի մէջ չես տեսնի երբէք
Ոչ հոգու կսկիծ, ոչ սրտի ճըմլում,
Հաճոյք ու վայելք է ամենուրէք
Եւ կեանքը այնտեղ մի գոյնով է գնում։

Կայ մի այլ ուղի—փըշոտ, քարքարոտ,
Որը, տե՛ս, ձըգւում է դորա կողքին.
Ա՛խ, այս նեղ ուղուն ոչ ոք չի կարօտ,
Բոլորն ատում են սորան դառնագին.—

Ինչպէս ցաւն ու վիշտն է այնտեղ օտար
Եւ մարդն ապրում է հանգիստ, անխըռով,
Նոյնպէս եւ անդորրն է այստեղ օտար
Եւ մարդն այրւում է կեանքի ցաւերով։

Կեանք էիր փընտրում, ահա՛ քեզ, ընկեր,
Երկու զանազան կեանքի ճանապարհ.
Մէկը քարքարոտ եւ մըռայլ պատկեր,
Միւսը գըրաւիչ, հարթ ու հաւասար…

Ա.ՅԾ